ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-682[11]-06.07.2020-ՏՀ-011

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետից հանել «օգտակար մոդելների,» բառերը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-**682**[11]-06.07.2020-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1.

1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքի ~~(այսուհետ՝ օրենք)~~ 11-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ ~~կետում~~ **կետից** հանել «օգտակար մոդելների,» բառերը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը~~ **2021 թվականի հուլիսի 1-ից:**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682-06.07.2020-ՏՀ-011/1), «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[1]-06.07.2020-ՏՀ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[2]-06.07.2020-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[3]-06.07.2020-ՏՀ-011/1), «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-6824-06.07.2020-ՏՀ-011/1), «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-6825-06.07.2020-ՏՀ-011/1, «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-6826-06.07.2020-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-6827-06.07.2020-ՏՀ-011/1), «ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[8]-06.07.2020-ՏՀ-011/1), «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[9]-06.07.2020-ՏՀ-011/1), ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[10]-06.07.2020-ՏՀ-011/1), «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[11]-06.07.2020-ՏՀ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[12]-06.07.2020-ՏՀ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

	«ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682-06.07.2020-ՏՀ-011/1)				
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1. «Արտոնագրերի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի վերնագրում «Օրենքի նպատակները» բառերը փոխարինվել են «Օրենքի կարգավորման առարկան» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2, հոդված 4, հոդված 7, հոդված 43, հոդված 58, հոդված 59, հոդված 65	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերում նախատեսված հասկացությունները սահմանվել են կրճատ տարբերակով: Մասնավորապես՝ հոդված 2-րդ 1-ին մասի 15-րդ, 17-րդ և 21-րդ կետերում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 43-րդ հոդվածի 2-րդ մասում, 58-րդ հոդվածի 6-7-րդ մասերում, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 2-րդ մասում, 65-րդ հոդվածի 8-րդ մասում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 6, հոդված 80	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում և 80-րդ հոդվածի 1-ին մասում «Օտարերկրյա անձ» հասկացության կիրառումը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին:		
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 7, հոդված 19, հոդված 60, հոդված 70, հոդված 77	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, 19-րդ հոդվածի 2-րդ, 60-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ հոդվածի 1-ին և 9-րդ և 77-րդ հոդվածի 2-րդ մասերում ավելացվել է «այդ թվում՝ ֆրանչայզինգ» արտահայտությունը՝ իր համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Հոդված 7, հոդված 22, հոդված 61, հոդված 66, հոդված 75, հոդված 76, հոդված 78, հոդված 83	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 22-րդ հոդվածի 4-րդ մասում, 61-րդ հոդվածի 1-ին մասում, 65-րդ հոդվածի 9-րդ մասում, 75-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, 76-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, 78-րդ հոդվածի 1-2-րդ և 4-րդ մասերում մասերում և 83-րդ հոդվածի 3-րդ մասում հստակեցվել են «գրանցամատյան» տերմինի բնորոշումները (համապատասխան հոլովաձևերով):	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 7	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «պահպանմանը,»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			բառից հետո ավելացվել է «գրանցամատյանից քաղվածքի տրամադրմանը,» արտահայտությունը, իսկ «հայտի նյութերի հետ ծանոթացմանը և դրանց պատճենների տրամադրմանը,» արտահայտությունը հանվել է:	փոփոխություն:	
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 8, հոդված 38, հոդված 64	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «կարգոց» բառը փոխարինվել է «կարգով» բառով: Նախագծի 38-րդ հոդվածի 4-րդ մասում «իրառման ունաբե» արտահայտությունը փոխարինվել է «գործավարությունն» բառով: Նախագծի 64-րդ հոդվածի 7-րդ մասում «իրառման ուն» բառը փոխարինվել է «առարկությունն» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	Հոդված 9	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում օրենքի վերնագրերից հետո նշած «Հայաստանի Հանրապետության» բառերը հանվել են:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	Հոդված 9, հոդված 76	Նախագծի 9-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետը և 76-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել են՝ «, վայրը» բառից հետո ավելացնելով՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշումով), հաշվառման վայրը,» արտահայտությունը:		
10	ՀՀ կառավարություն	Հոդված 12	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է՝ հանվել է «, օգտագործմանը» ստորակետը և բառը, իսկ նախադասության վերջում ավելացվել է «, այդ թվում՝ արտադրանքի կամ եղանակի կիրառմանը որոշակի նշանակությամբ» արտահայտությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	ՀՀ կառավարություն	Հոդված 19, հոդված 70	Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ և 12-14-րդ մասերում և 70-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերում «զիջում» տերմինը փոխարինվել է մասնագիտորեն ավելի ճիշտ «փոխանցում» տերմինով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով: Նախագծի 19-րդ հոդվածի 16-րդ մասի 3-րդ նախադասությունը վերախմբագրվել է՝ «Կապալառուի կողմից արտոնագիր ստանալու	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			իրավունքը կամ արտոնագիրն այլ անձին փոխանցելու դեպքում պատվիրատուն պահպանում է գյուտի օգտագործման իրավունքը վերը նշված պայմաններով:»		
12.	ՀՀ կառավարություն	Հոդված 21, հոդված 22, հոդված 65	Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածի 4-րդ մասում և 65-րդ հոդվածի՝ 7-րդ մասի 1-2-րդ կետերում և 9-րդ մասում նշված «որոշման» բառը փոխարինվել է «դատական ակտի» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13.	ՀՀ կառավարություն	Հոդված 25 Հոդված 27	Նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասում «նորմալ» բառը «փոխարինվել է «բնականոն» բառով: Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է, լրացվելով՝ «կամ որևէ այլ օրինական ձևով, ինչպիսիք են հարկադրական լիցենզիաները» արտահայտությամբ, իսկ 2-րդ մասում «օրինական ճանապարհով» արտահայտությունը փոխարինվել է՝ «կամ որևէ այլ օրինական ճանապարհով, ինչպիսիք են հարկադրական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			լիցենզիաները,» արտահայտությունով:		
14.	ՀՀ կառավարություն	Հոդված 30	Նախագծի 30-րդ հոդվածի 6-րդ մասում «ճանաչվել» տերմինը փոխարինվել է ավելի ճշգրիտ՝ «համարվել» տերմինով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
15.	ՀՀ կառավարություն	Հոդված 38	Նախագծի 38-րդ հոդվածի վերնագիրը և 1-4-րդ մասերը վերախմբագրվել են, ինչպես նաև լրացվել է նոր 2-րդ մասով՝ «Հայտի վերաբերյալ ներկայացրած իր ցանկացած դիմումը հայտատուն կարող է հետ կանչել այն ներկայացնելու օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»: Նախագծի 38-րդ հոդվածի 2-5-րդ մասերի համարակալումը փոխվել է դառնալով համապատասխանաբար՝ 3-6-րդ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
16.	ՀՀ կառավարություն	Հոդված 39	Նախագծի 39-րդ հոդվածի վերնագրում «Սխալների» բառը փոխարինվել է «Վրիպակների» բառով, որին համապատասխան փոփոխություն է կատարվել նաև 39-րդ հոդվածի 3-րդ մասում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

17.	ՀՀ կառավարություն	Հոդված 40, հոդված 82, հոդված 83	Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 82-րդ հոդվածի 3-րդ մասում և 83-րդ հոդվածի վերնագրում և 1-5-րդ մասերում «հավատարմատար» բառից (համապատասխան հոլովաձեւերով) առաջ նշվել է «արտոնագրային» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
18.	ՀՀ կառավարություն	Հոդված 41	Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «ծանուցագիրն ուղարկելու» բառերը փոխարինվել են՝ «ծանուցագրի ստացման» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
19.	ՀՀ կառավարություն	Հոդված 50	Նախագծի 50-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասությունը վերախմբագրվել է՝ «մերժելու մասին» բառերից հետո ավելացվել է «՝ սույն օրենքով նախատեսված կարգով նշված որոշման բողոքարկման հնարավորությունների ամբողջությամբ սպառվելուց հետո,» արտահայտությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
20.	ՀՀ կառավարություն	Հոդված 51 հոդված 61	Նախագծի 51-րդ հոդվածի 8-րդ մասը հանվել է: Նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մասում, 61-րդ հոդվածի 2-րդ մասում և 3-րդ մասի 2-րդ նախադասությունում «պետական լիազոր մարմինը» արտահայտությունը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոխարինվել է «Կառավարությունը» բառով:		
21.	ՀՀ կառավարություն	Հոդված 52	Նախագծի 52-րդ հոդվածի 10-րդ մասում «այնքան անգամ, որքան անհրաժեշտ է, հարցումն» հասկացությունը փոխարինվել է «այն» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
22	ՀՀ կառավարություն	Հոդված 54	Նախագծի 54-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացվել է 2-րդ նախադասությունը, հետևյալ խմբագրությամբ՝ «Արտոնագիր տալը մերժելու մասին՝ սույն օրենքով նախատեսված կարգով նշված որոշման բողոքարկման հնարավորությունների ամբողջությամբ սպառվելուց հետո, պետական լիազոր մարմինը տեղեկություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
23	ՀՀ կառավարություն	Հոդված 61	Նախագծի 61-րդ հոդվածի 1-ին մասում հանվել են՝ «Հայաստանի Հանրապետության» բառերը: Նախագծի 61-րդ հոդվածի 7-րդ մասը հանվել է:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
24	ՀՀ կառավարություն	Հոդված 64	Նախագծի 64-րդ հոդվածի 13-րդ կետի դրույթը համապատասխանեցվել է 57-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթին՝ «ուղարկման» բառը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոխարինվել է «ստացման» բառով:		
25	ՀՀ կառավարություն	Հոդված 65	Նախագծի 65-րդ հոդվածի 1-ին մասում՝ «շահագրգիռ» բառը փոխարինվել է «երրորդ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
26	ՀՀ կառավարություն	Հոդված 66	Նախագծի 66-րդ հոդվածի «Իրավունքների դադարեցումը» վերնագիրը վերախմբագրվել է, դառնալով՝ «Արտոնագրով տրամադրված իրավունքների դադարեցումը»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
27	ՀՀ կառավարություն	Հոդված 67	Նախագծի 67-րդ հոդվածի 1-ին մասում նշված «օբյեկտների» բառը փոխարինվել է «առարկաների» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
28	ՀՀ կառավարություն	Հոդված 70	Նախագծի 70-րդ հոդվածի 6-8-րդ մասերը վերախմբագրվել են՝ «6. Արտոնագրատիրոջ իրավունքների փոխանցումը և լիցենզիան (այդ թվում՝ ֆրանչայզինգը) ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում: Արտոնագրատիրոջ իրավունքների փոխանցումը եւ լիցենզիան (այդ թվում՝ ֆրանչայզինգը) գրանցվում են Կառավարության կողմից սահմանված կարգով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			7. Համապատասխան գրանցամատյանում գյուտի նկատմամբ իրավունքների փոխանցումը կամ լիցենզիան (այդ թվում՝ ֆրանչայզինգը) գրանցելու համար փոխանցումն իրականացնող կամ լիցենզային պայմանագրի կողմերից մեկը պետական լիազոր մարմին է ներկայացնում՝ 1) դիմում իրավունքների փոխանցումը կամ լիցենզիան գրանցելու մասին, 2) իրավունքների փոխանցումը հավաստող փաստաթուղթը՝ իրավունքները փոխանցողի և ստացողի կողմից ստորագրված կամ լիցենզային պայմանագիրը, լիցենզային պայմանագրից քաղվածքը կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարությունը՝ ստորագրված լիցենզատուի և լիցենզառուի կողմից, 3) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, համապատասխան դեպքում		

			նաև՝ նվազեցված դրույքաչափով վճարման հիմքերը՝ համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 28-րդ հոդվածի, 4) ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը (ներկայացուցչի առկայության դեպքում): 8. Պետական լիազոր մարմնում չգրանցված արտոնագրատիրոջ իրավունքների փոխանցումը կամ լիցենզիան (այդ թվում՝ ֆրանչայզինգը) անվավեր է:» • Նախագծի 70-րդ հոդվածում ավելացվել են նոր՝ 9-15-րդ հոդվածներ, հետևյալ խմբագրությամբ՝ «9. Լիցենզային պայմանագիրը, լիցենզային պայմանագրից քաղվածքը և լիցենզիայի տրամադրման մասին հայտարարությունը պետք է պարունակեն հետևյալ տվյալները՝ 1) լիցենզատուի ազգանունը, անունը (անվանումը) և		

			գտնվելու վայրը (հասցեն). 2) լիցենզառուի ազգանունը, անունը (անվանումը) և գտնվելու վայրը (հասցեն). 3) արտոնագրի համարը, որի համար տրամադրվում է լիցենզիան. 4) լիցենզիայի տեսակը. 5) գյուտերը, որոնց համար տրամադրվում է լիցենզիան. 6) լիցենզիայի գործողության ժամկետը. 7) լիցենզիայի գործողության տարածքը: 10. Պետական լիազոր մարմինը սույն հոդվածի 7-րդ մասում նշված փաստաթղթերն ստանալու օրվանից հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, իրականացնում է դրանց փորձաքննությունը և սույն հոդվածի պահանջներին համապատասխանելու դեպքում լիցենզիան գրանցում է պետական		

			գրանցամատյանում: 11. Սույն հոդվածի 9-րդ մասում նշված լիցենզիայի պայմանների հետագա փոփոխությունները, ինչպես նաև լիցենզիայի չեղյալ հայտարարումը գրանցվում են պետական գրանցամատյանում, որի համար լիցենզային պայմանագրի կողմերից մեկը պետական լիազոր մարմին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝ 1) դիմում լիցենզիայի փոփոխությունը կամ չեղյալ հայտարարումը գրանցելու մասին. 2) լիցենզիայի փոփոխությունը կամ չեղյալ հայտարարումը հաստատող փաստաթուղթ կամ լիցենզիայի փոփոխության կամ չեղյալ հայտարարման մասին հայտարարություն՝ ստորագրված լիցենզատուի և լիցենզառուի կողմից: 12. Սույն հոդվածում նշված դիմումների ձևերը, դրանց լրացման, ներկայացման և քննարկման կարգը սահմանում		

			է Կառավարությունը: 13. Սույն հոդվածով նախատեսված դիմումները չեն կարող մերժվել առանց դիմողին հնարավորություն ընձեռելու փաստարկներ ներկայացնել լիցենզիայի կամ դրա փոփոխությունների գրանցման օգտին: 14. Սույն հոդվածի համաձայն՝ ներկայացված դիմումների որևէ նշման կամ փաստաթղթի հավաստիությունը հիմնավոր կասկածներ հարուցելու դեպքում պետական լիազոր մարմինը կարող է պահանջել համապատասխան ապացույցներ: 15. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ենթալիցենզիաների և օրենքով սահմանված դեպքերում՝ ֆրանչայզինգի նկատմամբ մութաթիս մութանդիս (mutatis mutandis):»: • Նախագծի 70-րդ հոդվածի 9-11-րդ հոդվածները դարձել են՝ 16-18-րդ հոդվածներ:		

29	ՀՀ կառավարություն	Հոդված 71	• Նախագծի 71-րդ հոդվածի վերնագիրը վերախմբագրվել է, դառնալով՝ «Գյուտի նկատմամբ գույքային իրավունքների նկատմամբ իրավունքները և սահմանափակումները»: • Նախագծի 71-րդ հոդվածի 1-2-րդ մասերի բովանդակությունը վերախմբագրվել է՝ «1. Գյուտի նկատմամբ գույքային իրավունքների նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» օրենքով: 2. Գյուտի նկատմամբ գույքային իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սահմանափակումների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով և այլ օրենքներով, իրավական ակտերով:»:		
30	ՀՀ կառավարություն	Հոդված 72	Նախագծի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «առողջապահության» բառից հետո լրացվել է պարզաբանող՝ «(ներառյալ բժշկական ապրանքների հասանելիության և մատչելիության բացակայությունը)» արտահայտությամբ: Նախագծի 72-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունը վերախմբագրվել է՝ «Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթները չեն կիրառվում արտակարգ իրավիճակների կամ ծայրահեղ անհրաժեշտության այլ հանգամանքների, կամ հանրային ոչ առևտրային օգտագործման դեպքերում:»: Նախագիծը լրացվել է 72-րդ հոդվածի 5-րդ մասով, հետևյալ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			խմբագրությամբ՝ «5. Սույն հոդվածի 3-րդ մասի դրույթը չի կիրառվում սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն մրցակցության սահմանափակման պրակտիկան շտկելու համար հարկադրական լիցենզիա տրամադրվելու դեպքում:»		
31.	ՀՀ կառավարություն	Հոդված 73	Նախագծի 73-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը վերախմբագրվել է, «համար» բառից հետո լրացվելով՝ «, բացառությամբ՝ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն մրցակցության սահմանափակման պրակտիկան շտկելու համար տրամադրվող հարկադրական լիցենզիաների» արտահայտությամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
32	ՀՀ կառավարություն	Հոդված 74	Նախագծի 74-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրվել է, լրացվելով՝ «Սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հարկադրական լիցենզիա տրամադրելու դեպքում վարձատրության չափը որոշելիս պետք է հաշվի առնվի մրցակցության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սահմանափակման պրակտիկան շտկելու անհրաժեշտությունը:» երկրորդ նախադասությամբ:		
33	ՀՀ կառավարություն	Հոդված 75	Նախագծի 75-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «3. Գրանցամատյանի բովանդակությունը, դրանում փոփոխություն կատարելու մասին դիմումի ձեւը, փոփոխություններ կատարելու ընթացակարգը, քաղվածքի ձեւը եւ դրա տրամադրման, ինչպես նաեւ գրանցամատյանի վարման հետ կապված գործողությունների կատարման կարգը սահմանում է Կառավարությունը:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
34	ՀՀ կառավարություն	Հոդված 79	Նախագծի 79-դ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանվել է:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
35	ՀՀ կառավարություն	Հոդված 82	Նախագծի 82-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական լիազոր մարմինն անցկացնում է արտոնագրային հավատարմատարների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			որակավորման քննություններ: Արտոնագրային հավատարմատարների որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:		
36	ՀՀ կառավարություն	Հոդված 84	• Նախագծի 84-րդ հոդվածի 14-րդ մասը վերախմբագրվել է՝ «օրենքի 1-21-րդ, 30-59-րդ և 63-81-րդ հոդվածները» բառերը և թվերը փոխարինելով «օրենքը» բառով: • Նախագծի 84-րդ հոդվածը լրացվել է հետևյալ խմբագրությամբ 15-րդ մասով՝ «15. Սույն օրենքի ընդունումից հետո վեց ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, 9-րդ հոդվածի 1-ին մասով, 40-րդ հոդվածի 5-րդ մասով, 51-րդ հոդվածի 1-ին մասով, 61-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 70-րդ հոդվածի 6-րդ և 12-րդ մասերով, 75-րդ հոդվածի 3-րդ մասով, 82-րդ հոդվածի 4-րդ մասով և 83-րդ հոդվածի 5-րդ մասով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նախատեսված կարգերը:		
37	ՀՀ կառավարություն	Հոդված 85	Նախագծի 85-րդ հոդվածի 1-ին մասի «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» արտահայտությունը փոխարինվել է «2021 թվականի հուլիսի 1-ից» արտահայտությամբ: Նախագծի 85-րդ հոդվածից հանվել է 2-րդ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-682[1]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	«Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի վերնագրում «Օրենքի նպատակները» բառերը փոխարինվել են «Օրենքի կարգավորման առարկան» բառերով:		Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածից հանվել են «2) ՄՍՀԿ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն.», 3) ԹՐԻՓՍ (TRIPS) համաձայնագիր՝ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին		Ընդունվել է:

			առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր, որն ստորագրվել է 1994 թ. ապրիլի 15-ին Մարաքեշում. «4) Միջազգային բյուրո՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո.» հասկացությունները: 2-րդ հոդվածի 5), 6), 7), 8), 9), 10), 11), 12), 13) կետերը համապատասխանամաբր փոխվել են 2), 3), 4), 5), 6),7), 8), 9), 10), 11), 12),13)-ի: Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ավանդադրման» բառը փոխարինվել է «գրանցման» բառով: Նույն հոդվածը լրացվել է նոր 15), 16), 17), 18), 19), 20) կետերով հետևյալ բովանդակությամբ՝ «15) չգրանցված արդյունաբերական դիզայն՝ արդյունաբերական դիզայն, որը սույն օրենքին համապատասխան պահպանվում է առանց հայտ ներկայացնելու.		

			16) միջազգային հայտ՝ արդյունաբերական դիզայնի միջազգային գրանցման հայտ, որը պետական լիազոր մարմին ներկայացված է Հաագայի համաձայնագրի համաձայն. 17) միջազգային գրանցում՝ արդյունաբերական դիզայնի գրանցում, որն իրականացվել է Հաագայի համաձայնագրի համաձայն. 18) Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրություն՝ 1994 թվականի սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արդյունաբերական նմուշների պահպանության մասին արձանագրություն. 19) եվրասիական հայտ՝ եվրասիական արտոնագիր ստանալու հայտ, որը Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության համաձայն ներկայացված է պետական լիազոր մարմին. 20) եվրասիական արտոնագիր՝ Եվրասիական արտոնագրային		

			կոնվենցիային կից արձանագրության համաձայն տրված արտոնագիր»: Նույն հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը փոխարինվել է 14) կետով հետևյալ բովանդակությամբ՝ «14) գրանցված արդյունաբերական դիզայն՝ արդյունաբերական դիզայն, որը պահպանվում է սույն օրենքին համապատասխան տրված արտոնագրով կամ միջազգային ընթացակարգով ներկայացված հայտի հիման վրա.»:		
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սույն օրենքի համաձայն պահպանվող արդյունաբերական դիզայնին իր ստեղծման կամ ցանկացած ձևով ամրագրման օրվանից սկսած կարող է պահպանություն տրամադրվել նաև հեղինակային իրավունքի մասին օրենսդրությանը համապատասխան՝ որպես արտոնագրատիրոջ կամ նրա համաձայնությամբ այլ անձի		Ընդունվել է:

			բացառիկ իրավունքի օբյեկտ: Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ՝ «4. Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչվում և պահպանվում են եվրասիական արտոնագրից բխող իրավունքները:»		
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Նախագծի 5-րդ հոդվածում «կազմակերպություններն» բառից հետո ավելացվել է «(այսուհետ՝ օտարերկրյա անձ)» բառերը:		Ընդունվել է:
5	ՀՀ կառավարություն	Հոդված 6	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «Միջազգային բյուրոյի» բառերը փոխարինվել են «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրոյի (այսուհետ՝ Միջազգային		

			բյուրո)» բառերով: Նույն մասի 3-րդ կետից հանվել են «(այսուհետ՝ գրանցամատյան վարումը և դրա պահպանումը» բառերը փոխարինվել են «և սույն օրենքով նախատեսված այլ գրանցամատյանների վարումը և պահպանումը.» բառերով: Նույն մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6) Հաագայի համաձայնագրի ընթացակարգով ներկայացվող միջազգային հայտերի և Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության ընթացակարգով ներկայացվող եվրասիական հայտերի համար սույն օրենքով սահմանված կարգով որպես ստացող գերատեսչություն հանդես գալը.»: Նույն մասը լրացվել է 9-րդ կետով՝ «9) եվրասիական արտոնագիր տալու դեմ առարկություն ներկայացնելը:» Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ		

			մասը հանվել է, իսկ նույն հոդվածի 5-րդ մասը դարձել է 4-րդ մաս:		
6.		Հոդված 6, հոդված 19,	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, 19-րդ հոդվածի 8-րդ, 10-րդ մասերում «զիջման» բառը փոխարինվել է «փոխանցման» բառով: Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասում «զիջել» բառը փոխարինվել է «փոխանցել» բառով:		
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 7, հոդված 73	Նախագծից հանվել է 7-րդ հոդվածի 2-րդ մասը:		
8.	ՀՀ կառավարություն	Հոդված 8, հոդված 22, հոդված 35, հոդված 56, հոդված 71	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասից, 35-րդ հոդվածի 4-րդ մասից, 56-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից հանվել են «Հայաստանի Հանրապետության» բառերը, 22-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է «ՀՀ» տառերը: Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասում «համապատասխան հարցման դեպքում» բառերը փոխարինվել են «օրենքով սահմանված կարգով:»		

			բառերով: Նույն հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետը «բնակության վայրը» բառերից հետո լրացվել է «անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշմամբ), հաշվառման վայրը,» բառերով:		
9.	ՀՀ կառավարություն	Գլուխ 2	Նախագծի 2-րդ գլուխը ձևակերպվել է «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» խմբագրությամբ:		
10.	ՀՀ կառավարություն	Հոդված 13, հոդված 16	Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասից, 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանվել է «դիզայների» բառը:		
11.	ՀՀ կառավարություն	Հոդված 15	Նախագծի 15-րդ հոդվածից հանվել է 3-րդ մասը:		
12.	ՀՀ կառավարություն	Գլուխ 3	Նախագիծը լրացվել է նոր 3-րդ գլխով՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ» վերնագրով:		

13.	ՀՀ կառավարություն	Հոդված 16	Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանվել է «իրավական» բառը: Նույն հոդվածի 2-րդ մասում «ինքնուրույնության» բառը փոխարինվել է «ազատության» բառով:		
14.	ՀՀ կառավարություն	Գլուխ 4	Նախագիծը լրացվել է նոր 4-րդ գլխով՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՀԵՂԻՆԱԿԸ. ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐԸ» վերնագրով:		
15.	ՀՀ կառավարություն	Հոդված 18, հոդված 29, հոդված 33, հոդված 34, հոդված 35, հոդված 42, հոդված 43, հոդված 45, հոդված 47, հոդված 49,	Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասից հանվել է «(այսուհետ նաև՝ դիզայներ)» բառերը: Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «իրառմ» բառը փոխարինվել է «դիզայն» բառով: Նույն հոդվածի 6-րդ մասում «40-րդ» հղումը փոխարինվել է «38-րդ»-ով Նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ մասում, 29-րդ հոդվածի 4-րդ մասում, 34-րդ հոդվածի 2-րդ,		

		հոդված 50, հոդված 64,	4-րդ մասերում, 35-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 6-րդ մասերում, 42-րդ հոդվածի 2-րդ մասում, 43-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ մասերում, 45-րդ հոդվածի 3-րդ մասում, 47-րդ հոդվածի 6-րդ մասում, 49-րդ հոդվածի 1-ին մասում, 50-րդ հոդվածի 1-ին մասում, 64-րդ հոդվածի 5-րդ մասում «ստանալու» բառը փոխարինվել է «ուղարկման» բառով:		
16.	ՀՀ կառավարություն	Հադված 19	Նախագծի 19-րդ հոդվածի 10-րդ մասում «8-րդ» հղումը փոխարինվել է «9-րդ» հղումով: Նույն հոդվածի 11-րդ մասում «իրառմ» բառը փոխարինվել է «դիզայնը» բառով:		
17.	ՀՀ կառավարություն	Հոդված 20 Հոդված 21 Հոդված 28 Հոդված 50 Հոդված 51	Նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասում, 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերում, 28-րդ հոդվածի 3-րդ մասում, 50-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերում, 51-րդ հոդվածի 9-րդ մասում «գրանցամատյանում» բառից առաջ լրացվել է «Արդյունաբերական դիզայնի պետական» բառերով: 20-րդ հոդվածի 4-րդ մասում «հրապարակում է» բառից		

			հետո ավելացվել է «են» օժանդակ բայը:		
18.	ՀՀ կառավարություն	Հոդված 22 Հոդված 24	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում « նշելուց՝» բառից հետո լրացվել է «այդ մասին պետական լիազոր մարմին հայտարարություն ներկայացնելով» արտահայտությամբ: Նույն հոդվածը 2-րդ մասից հետո լրացվել է նոր 3-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «3. Հեղինակության իրավունքն (հեղինակ ճանաչվելու իրավունք) անձնական անփոխանցելի և անօտարելի իրավունք է և պահպանվում է անժամկետ:»: Նույն հոդվածի 3-րդ մասը փոխարինվել է 4-րդ մասով, որտեղ «պարտադրումը» բառը փոխարինվել է «հարկադրելը» բառով, «խնդրարկումը, ճանաչվում է» բառերը փոխարինվել են «պաշտոնական ճանաչումը համարվում է» բառերով: Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասում «նորմալ» բառը		

			«փոխարինվել է «բնականոն» բառով:		
19	ՀՀ կառավարություն	Գլուխ 5	Նախագիծը լրացվել է նոր 5-րդ գլխով՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՈՒՄԸ» վերնագրով:		
20	ՀՀ կառավարություն	Հոդված 27	Նախագծի 27-րդ հոդվածի վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Արդյունաբերական դիզայնի հայտի մերժումը և արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքի անվավեր ճանաչումը»:		
21	ՀՀ կառավարություն	Հոդված 28	Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «հանրության համար» բառերից հետո ավելացվել է «այդ թվում՝ մշակութային ժառանգության (ներառյալ՝ էթնիկական և կրոնական) օբյեկտները, դրանց ճանաչելի մասերի անվանումները կամ պատկերները,» բառերը:		

			Նույն մասի 6-րդ կետից հանվել է «գրանացման» բառը և (իրավական պահպանություն տրամադրելու) փակագծերը: Նույն մասի 8-րդ կետում «հանգեցնում» բառից հետո ավելացվել է «է» օժանդակ բայով:		
22	ՀՀ կառավարություն	Գլուխ 6	Նախագծը 3-րդ գլուխը փոխարինվել է նոր 6-րդ գլխով և վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ» :		
23	ՀՀ կառավարություն	Հոդված 29	Նախագծի 29-րդ հոդվածը 5-րդ կետից հետո լրացվել է նոր 6-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «6. Մեկ կամ մի քանի առաջնություն սահմանելիս, առաջնության իրավունքը տարածվում է միայն այն արդյունաբերական դիզայնների վրա, որոնք ներառված են առաջին հայտում կամ հայտերում, որոնց հիման վրա խնդրարկվում է		

			առաջնությունը:» Նույն հոդվածի նոր 7-րդ (հին 6-րդ) կետում «հետ կանչված» բառերից հետո ավելացվել է «կամ հետ կանչված համարված» բառերը , իսկ «ներկայացման թվականից» բառերից հետո ավելացվել է «սկսած» բառը: Նույն հոդվածի նոր 9-րդ (հին 8-րդ) մասից հանվել է «(ավելի վաղ ներկայացված)» բառերը: Նույն հոդվածի 10-րդ (հին 9) մասում «6-րդ և 8-րդ» հղումները փոխարինվել են «7-րդ և 9-րդ » հղումներով:		
24	ՀՀ կառավարություն	Հոդված 30	Նախագծի 30-րդ հոդվածի վերնագրում «Ցուցահանդեսային առաջնություն» բառերը փոխվել են՝ «Ժամանակավոր իրավական պահպանությունը որոշ միջազգային ցուցահանդեսներում» բառերով:		
25	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 7	Նախագիծը լրացվել է նոր 7-րդ գլխով ՝«ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԵՎ		

			ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ» վերնագրով:		
26	ՀՀ կառավարություն	Հոդված 33 Հոդված 69	Նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասում «13-րդ հոդվածով» բառերը փոխարինվել են «14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով» բառերով, Նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասում, 69-րդ հոդվածի 1-ին մասում «39-րդ» հղումը փոխարինվել է «37-րդ»-հղումով:		
27	ՀՀ կառավարություն	Հոդված 34	Նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է «տարեկան» բառը:		
28	ՀՀ կառավարություն	Հոդված 36	Նախագծի 36-րդ հոդվածը տեղափոխվել է 8-րդ գլուխ որպես է 39-րդ հոդված: Նույն հոդվածի վերնագիրը լրացվել է «Հայտի կամ» բառերով, 1-ին մասը «իր» բառից հետո լրացվել է «հայտը կամ ցանկացած» բառերով, 3-րդ մասը «դիմումը» բառից առաջ լրացվել է «Հայտը կամ» բառերով: Հոդվածը լրացվել է 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ՝ «4. Հայտի հետկանչման մասին հայտատուի դիմումի հիման		

			վրա պետական լիազոր մարմինը տեղեկություն է հրապարակում տվյալ հայտով գործավարությունն ավարտելու վերաբերյալ:», 6-րդ մասը «հայտը բառից հետո» լրացվել է «կամ դիմումը» բառերով:		
29	ՀՀ կառավարություն	Հոդված 37	Նախագծի 37-րդ հոդվածը տեղափոխվել է 8-րդ ԳԼՈՒԽ որպես 40-րդ հոդված: Նույն հոդվածի վերնագրում, 3-րդ մասում «Սխալների» բառը փոխարինվել է «Վրիպակների» բառով:		
30	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 8	Նախագծի «4-րդ գլուխ» բառերը փոխարինվել են «8-րդ գլուխ» բառերով:		
31	ՀՀ կառավարություն	Հոդված 38 (36) Հոդված 66 Հոդված 67	Նախագծի նոր «38-րդ» հոդվածը ձևակերպվել է հին «36-րդ» հոդվածի խմբագրությամբ : Հոդվածի 1-ին մասը «արդյունաբերական դիզայնների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱԴՄԴ)» բարերը փոխարինվել են «ԱԴՄԴ»		

			բառերով: Նախագծի նոր 36-րդ (հին 38-րդ) հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, 4-րդ մասի 1-ին կետը, 66-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերը, 67-րդ հոդվածի վերնագիրը, 67-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերը լրացվել են «արտոնագրային» բառով: 36-րդ հոդվածից հանվել է 5-րդ մասը:		
32	ՀՀ կառավարություն	Հոդված 39 (37)	Նախագծի նոր 39-րդ հոդվածը ձևակերպվել է հին 37-րդ հոդվածի խմբագրությամբ: Նույն հոդվածի 6-րդ մասում «հայտի» բառից առաջ ավելացվել է «Արդյունաբերական դիզայնի» բառերը:		
33	ՀՀ կառավարություն	Հոդված 40 (38)	Նախագծի նոր 40-րդ հոդվածը ձևակերպվել է հին 38-րդ հոդվածի խմբագրությամբ: Հոդվածը լրացվել է նոր 3-րդ մասով հետևյալ խմբագրությամբ՝ «3. Եվրասիական արտոնագրային կոնվեցիային կից արձանագրության 17-րդ		

			հոդվածի համաձայն փոխակերպված հայտի ներկայացման թվականը սահմանվում է տվյալ հոդվածին համապատասխան:»		
34	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 9	Նախագծի «5-րդ գլուխ» բառերը փոխարինվել է «9-րդ գլուխ» բառերով:		
⍰⍰	ՀՀ կառավարություն	Հոդված 42	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «40-րդ» հղումը փոխարինվել է «38-րդ»-ով:		
36		Հոդված 43 Հոդված 69	Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 6-րդ մասում, 69-րդ հոդվածում «38-րդ» հղումը փոխարինվել է «36-րդ»-ով: Նույն հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ՝ «9. Հայտը, որը ներառում է մեկից ավել արդյունաբերական դիզայններ, որոնք չեն վերաբերում ԱԴՄԴ մեկ դասին, հայտատուի նախաձեռնությամբ կամ պետական լիազոր մարմնի առաջարկով, սույն օրենքի 29-		

			րդ հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներում կարող է բաժանվել մեկ կամ մի քանի զատված հայտ ներկայացնելու միջոցով՝ սկզբնական հայտում ներկայացված արդյունաբերական դիզայնները բաշխելով այդ հայտերի միջև: 10. Զատված հայտը, որը բավարարում է սույն օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջներին պահպանում է սկզբնական հայտի ներկայացման թվականը և սահմանված առաջնության թվականը: 11. Զատված հայտի ձևակերպման և ներկայացման նկատմամբ Կարգով նախատեսված պահանջների խախտման ու սահմանված ժամկետում հայտատուի կողմից անհրաժեշտ ճշգրտումները և ուղղումները չներկայացնելու դեպքում, զատված հայտը համարվում է չներկայացված, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:»:		

			Հոդվածը լրացվել է նոր 14-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «14. Հայտի քննարկման ցանկացած փուլում, օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պայմանով, հայտատուն կարող է ներկայացնել դիմում հայտում փոփոխություններ կատարելու մասին, որոնք չեն հանգեցնում արդյունաբերական դիզայնի էության փոխոխության:»		
37	ՀՀ կառավարություն	Հոդված 44	37. Նախագծի 44-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սույն օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն զատված հայտը չի հրապարակվում, եթե դրա մեջ ներառված արդյունաբերական դիզայններն արդեն հրապարակվել են սկզբնական հայտի շրջանակներում:»		
38	ՀՀ կառավարություն	Հոդված 46	Նախագծի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «վերջնական» բառից հետո ավելացվել է «մերժման»		

			բառը և «կայացումը» բառից հետո ավելացվել է «կամ, համապատասխան դեպքում, մինչև ավելի վաղ առաջնությամբ արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալը.» բառերը: 46-րդ հոդվածից հանվել է 3-րդ մասի 2-րդ կետը, 5-րդ մասի 1)-ին կետում «արդյունաբերական դիզայնի» բառերից հետո ավելացվել է «արտոնագիր տալը հայտարկված բոլոր արդյունաբերական դիզայնների կամ դրանց մի մասի» բառերը:		
39	ՀՀ կառավարություն	Հոդված 47	Նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասում «Երրորդ անձանց կողմից առարկություններ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում պետական լիազոր մարմինը, սահմանած կարգով,» բառերը փոխարինվել է «Պետական լիազոր մարմինը հայտի հրապարակման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում, կառավարության սահմանած կարգով» բառերով,		

			Նախագծի 2-րդ մասում «Փորձաքննության» բառը փոխարինվել է «Նշված» բառով, իսկ «5-րդ» հղումը փոխարինվել է «3-րդ» հղումով, 7-րդ մասում «գրանցումը» բառը փոխարինվել է- «արտոնագիր տալը» բառերով, «գրանցման» բառը փոխարինվել է «արտոնագիր տալու» բառերով:		
40	ՀՀ կառավարություն	Հոդված 48	Նախագծի 48-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է «արտոնագիր տալը մերժելու մասին» բառերով:		
41	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 10	Նախագծի «ԳԼՈՒԽ 6» բառը և թիվը փոխարինվել է «ԳԼՈՒԽ 10» բառով և թվով:		
42	ՀՀ կառավարություն	Հոդված 50	Նախագծի 50-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում «պետական լիազոր մարմինը» բառերը փոխարինվել են «Կառավարությունը» բառով: Նախագծի 50-րդ հոդվածի 7-րդ մասը հանվել է		
43	ՀՀ կառավարություն	Հոդված 52	Նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մասից հանվել է կրկնվող «համար» բառը, 3-րդ մասում «50-րդ» հղումը		

			փոխարինվել է «51-րդ» հղումով		
44	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 11	Նախագծը լրացվել է նոր 11-րդ գլխով «ԱՐՏՈՆԱԳԻՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ» վերնագրով:		
??	ՀՀ կառավարություն	Հոդված 54	Նախագծի 54-րդ հոդվածի վերնագրում «Անվավերության» բառը փոխարինվել է «Անվավեր ճանաչելու» բառերով:		
46	ՀՀ կառավարություն	Հոդված 55	Նախագծի 55-րդ հոդվածի վերնագիրը լրացվել է «Արդյունաբերական դիզայնի արտոնագրով վերապահված» բառերով		
47	ՀՀ կառավարություն	Գլուխ 12	Նախագծի «ԳԼՈՒԽ 7» բառը և թիվը փոխարինվել է «ԳԼՈՒԽ 12» բառով և թվով, վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ		

			ԳՐԱՎԸ»:		
48	ՀՀ կառավարություն	Հոդված 56	Նախագծի 56-րդ հոդվածի 2-րդ մասում «Արդյունաբերական դիզայնի նկատմամբ» բառերը փոխարինվել է «արտոնագրատիրոջ» բառով: Նախագծի 56-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «3. Պետական գրանցամատյանում արդյունաբերական դիզայնի իրավունքների փոխանցումը գրանցելու համար փոխանցումն իրականացնող կողմերից մեկը պետական լիազոր մարմին է ներկայացնում՝»: Նույն հոդվածի 4-րդ մասում «լիազոր մարմնում» բառերից հետո լրացվել է «Կառավարության կողմից սահմանված կարգով:» բառերով: Նույն մասից հանվել է «Պետական լիազոր մարմինը լիցենզիան գրանցում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանած կարգով» նախադասությունը:		

			Նույն հոդվածի 6-րդ մասում «1-ին մասը» բառերը փոխարինվել է «1-3 մասերը» բառերով» , իսկ «հայտատուի» բառից հետո ավելացվել է «իրավունքների» բառը:		
49	ՀՀ կառավարություն	Հոդված 57	Նախագծի 57-րդ հոդվածի 1-ին մասում լրացվել է «ժամկետում» բառը, 2-րդ մասը լրացվել է «ժամկետում ու տարածքում» բառերով, 4-րդ մասը շարադրվել է հետևյալ նոր խմբագրությամբ՝ «4. Լիցենզիան ենթակա է գրանցման պետական լիազոր մարմնում Կառավարության կողմից սահմանված կարգով, որի համար լիցենզային պայմանագրի կողմերից մեկը պետական լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝ 1) դիմում՝ լիցենզիան գրանցելու մասին. 2) լիցենզային պայմանագիրը, լիցենզային պայմանագրից քաղվածք կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարություն՝		

			ստորագրված լիցենզատուի և լիցենզառուի կողմից. 3) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը. 4) ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը (ներկայացուցչի առկայության դեպքում): Պետական լիազոր մարմնում չգրանցված լիցենզիան անվավեր է:»: Նույն հոդվածը լրացվել է նոր 5-րդ-11-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝ «5. Լիցենզային պայմանագիրը, լիցենզային պայմանագրից քաղվածքը և լիցենզիայի տրամադրման մասին հայտարարությունը պետք է պարունակեն հետևյալ տվյալները՝ 1) լիցենզատուի ազգանունը, անունը (անվանումը) և գտնվելու վայրը (հասցեն). 2) լիցենզառուի ազգանունը, անունը (անվանումը) և գտնվելու վայրը (հասցեն). 3) արդյունաբերական դիզայնի արտոնագրի		

			համարը, որի համար տրամադրվում է լիցենզիան. 4) լիցենզիայի տեսակը. 5) արդյունաբերական դիզայնները, որոնց համար տրամադրվում է լիցենզիան. 6) լիցենզիայի գործողության ժամկետը. 7) լիցենզիայի գործողության տարածքը: 6. Պետական լիազոր մարմինը սույն հոդվածի 4-րդ մասում նշված փաստաթղթերը ստանալու օրվանից հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, իրականացնում է դրանց փորձաքննությունը և սույն հոդվածի պահանջներին համապատասխանելու դեպքում լիցենզիան գրանցում է պետական գրանցամատյանում: 7. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված լիցենզիայի պայմանների հետագա փոփոխությունները, ինչպես նաև լիցենզիայի չեղյալ հայտարարումը գրանցվում են պետական գրանցամատյանում, որի		

			համար լիցենզային պայմանագրի կողմերից մեկը պետական լիազոր մարմին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝ 1) դիմում լիցենզիայի փոփոխությունը կամ չեղյալ հայտարարումը գրանցելու մասին. 2) լիցենզիայի փոփոխությունը կամ չեղյալ հայտարարումը հաստատող փաստաթուղթ կամ լիցենզիայի փոփոխության կամ չեղյալ հայտարարման մասին հայտարարություն՝ ստորագրված լիցենզատուի և լիցենզառուի կողմից: 8. Սույն հոդվածում նշված դիմումների ձևերը, դրանց լրացման, ներկայացման և քննարկման կարգը սահմանում է կառավարությունը: 9. Սույն հոդվածով նախատեսված դիմումները չեն կարող մերժվել առանց դիմողին հնարավորություն ընձեռելու փաստարկներ ներկայացնել լիցենզիայի կամ դրա փոփոխությունների		

			գրանցման օգտին: 10. Սույն հոդվածի համաձայն՝ ներկայացված դիմումների որևէ նշման կամ փաստաթղթի հավաստիությունը հիմնավոր կասկածներ հարուցելու դեպքում պետական լիազոր մարմինը կարող է պահանջել համապատասխան ապացույցներ: 11. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ենթալիցենզիաների և օրենքով սահմանված դեպքերում՝ ֆրանչայզինգի նկատմամբ մութաթիս մութանդիս (mutatis mutandis):» Նույն հոդվածի 5-րդ մասը խմբագրվել է նոր 12-րդ մասի հետևյալ բովանդակությամբ՝ «12. Լիցենզային պայմանագրի, այդ թվում՝ ֆրանչայզինգի, և իրավունքի փոխանցման մասին պայմանագրի գրանցման հետ կապված պետական լիազոր մարմնի որոշումները		

			դրանց ընդունման օրվանից եռամսյա ժամկետում կարող են բողոքարկվել պետական լիազոր մարմնի բողոքարկման խորհրդում կամ դատական կարգով:»:		
50	ՀՀ կառավարություն	Հոդված 58	Նախագծի 58-րդ հոդվածի վերնագրում «իրավունքների գրավադրումը և դրանք արգելանքի տակ դնելը» բառերը փոխարինվել են «գույքային իրավունքները, սահմանափակումները և գրավը» բառերով: Նույն հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածները խմբագրվել են հետևյալ բովանդակությամբ՝ «1. Արդյունաբերական դիզայնի նկատմամբ գույքային իրավունքների նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման		

			մասին» օրենքով: 2. Արդյունաբերական դիզայնի նկատմամբ գույքային իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի, սահմանափակումների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով և այլ օրենքներով, իրավական ակտերով:»:		
51	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 13	Նախագծի «ԳԼՈՒԽ 8» բառը և թիվը փոխարինվել է «ԳԼՈՒԽ 13» բառով և թվով:		
52	ՀՀ կառավարություն	Հոդված 59 Հոդված 60 Հոդված 61 Հոդված 62	Նախագծի 59-րդ հոդվածի վերնագիրը լրացվել է «և դրա վարումը» բառերով: Նույն հոդվածի 1-ին մասից հանվել է «(այսուհետ՝ գրանցամատյաններ)» բառերը, «գրանցամատյանները» բառը փոխարինվել է «գրանցամատյանը» բառով, «են» օժանդակ բայը «է» օժանդակ բայով: 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերը, 60-րդ հոդվածի		

			վերնագիրը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 61-րդ հոդվածի վերնագիրը, 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերը, 62-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերը լրացվել են «պետական» բառով: 59-րդ հոդվածի 3-րդ մասում «գրանցամատյանների» բառը փոխարինվել է «գրանցամատյանի» բառերով, «առաքման» բառը փոխարինվել է «տրամադրման » բառով և հանվել է «այլ» բառը:		
53	ՀՀ կառավարություն	Հոդված 60	Նախագծի 60-րդ հոդվածի 1-ին մասը «բնակության վայրը» բառերից հետո լրացվել է «անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշմամբ), հաշվառման վարը,», իսկ 2-րդ նույն մասում «բնակության վայրը)» բառերից հետո լրացվել է «(եթե հեղինակը չի ներկայացրել որպես այդպիսին նշված չլինելու		

			հայտարարությունը),» արտահայտություններով:		
54	ՀՀ կառավարություն	Հոդված 61	Նախագծի 61-րդ հոդվածի 2-րդ մասում «լիցենզիաների,» բառից հետո ավելացվել է «այդ թվում ֆրանչայզինգի» բառերը:		
55	ՀՀ կառավարություն	Հոդված 62	Նախագծի 62-րդ հոդվածի 2-րդ մասում «ուղարկման,» բառը փոխարինվել է «ստացման» բառով, «եռամսյա» բառը՝ «երկամսյա» բառով:		
56	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 14	Նախագծի «ԳԼՈՒԽ 9» բառը և թիվը փոխարինվել է «ԳԼՈՒԽ 14» բառով և թվով:		
57	ՀՀ կառավարություն	Հոդված 63	Նախագծի 63-րդ հոդվածի 1-ին մասում «գործավարությունը» բառը փոխարինվել է «գործերը» բառով: Նույն հոդվածի 4-րդ մասում «63-րդ» հղումը փոխարինվել է «64-րդ»-ով: Նախագծի 63-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանվել է		
58	ՀՀ կառավարություն	Հոդված 64	Նախագծի 64-րդ հոդվածի 1-ին մասում «Օտարերկրյա ֆիզիկական		

			անձինք և կազմակերպությունները» արտահայտությունը փոխարինվել է «Օտարերկրյա անձինք» բառերով: Նույն հոդվածի 4-րդ մասից հանվել է «տարեկան» բառը: Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական լիազոր մարմինն անցկացնում է արտոնագրային հավատարմատարների որակավորման քննություններ: Արտոնագրային հավատարմատարների որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը		
59	ՀՀ կառավարություն	Հոդված 66	Նախագծի 66-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո ավելացվել են «տարածքում գործող» բառերը: Նախագծի 66-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական լիազոր		

			մարմինն անցկացնում է արտոնագրային հավատարմատարների որակավորման քննություններ: Արտոնագրային հավատարմատարների որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:»		
60	ՀՀ կառավարություն	Հոդված 67	Նախագծի 67-րդ հոդվածի վերնագիրը, նույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերը լրացվել են «համապատասխան» բառով, 5-րդ մասի 1-ին նախադասության մեջ «հավատարմատարների» բառից առաջ ավելացվել է «Արտոնագրային» բառը, իսկ 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Արտոնագրային հավատարմատարների գրանցումն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝ Կառավարության կողմից սահմանված կարգով:»:		
61	ՀՀ	ԳԼՈՒԽ 15	Նախագծի «ԳԼՈՒԽ 10» բառը և թիվը		

	կառավարություն		փոխարինվել է «ԳԼՈՒԽ 15» բառով և թվով և շարադրվել է հետևյալ նոր խմբագրությամբ՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ»		
62	ՀՀ կառավարություն	Հոդված 68	Նախագծի 68-րդ հոդվածը 2-4-րդ մասերը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «2. Հաագայի համաձայնագրի համաձայն միջազգային հայտերը Միջազգային բյուրո, իսկ Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության համաձայն եվրասիական հայտերը Եվրասիական արտոնագրային կազմակերպություն ներկայացվում են անմիջականորեն կամ պետական լիազոր մարմնի միջոցով: Միջազգային հայտը պետք է ներկայացվի անգլերեն, իսկ եվրասիական հայտը՝ ռուսերեն լեզվով: 3. Հաագայի համաձայնագրի ընթացակարգով Միջազգային բյուրո ներկայացվող		

			միջազգային հայտերով, ինչպես նաև Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության ընթացակարգով Եվրասիական արտոնագրային կազմակերպություն ներկայացվող եվրասիական հայտերով, պետական լիազոր մարմինը հանդես է գալիս որպես ստացող պետական մարմին միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձանց համար: 4. Պետական լիազոր մարմինն ստուգում է ստացված հայտերի անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին, որի արդյունքներով սահմանում է միջազգային կամ եվրասիական հայտի ներկայացման թվականը, և այդ թվականից հետո՝		

			Հաագայի համաձայնագրի հրահանգով մեկամսյա ժամկետում առաքում է դրանք Միջազգային բյուրո, կամ Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված ժամկետում առաքվում է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:»:		
63	ՀՀ կառավարություն	Հոդված 69	Նախագիծը լրացվել է 69-րդ հոդվածո «Հոդված 69. Եվրասիական հայտերը, որոնք ունեն սույն օրենքով սահմանված կարգով ներկայացվող հայտի ուժ 1. Մերժված եվրասիական հայտի հիման վրա, Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության 17-րդ հոդվածի համաձայն, սույն օրենքով սահմանված կարգով արտոնագիր տալու հայտը պետական լիազոր մարմինը քննարկում է Եվրասիական արտոնագրային		

			գերատեսչությունից տվյալ հայտի վավերացված պատճենն ստանալու օրվանից: Նշված օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, հայտատուն պարտավոր է ներկայացնել սույն օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով սահմանված հայտի անհրաժեշտ նյութերը:»		
64	ՀՀ կառավարություն	Հոդված 70	Նախագիծը լրացվել է 70-րդ հոդվածով՝ «Հոդված 70. Միջազգային բյուրոյի կողմից ծանուցված միջազգային գրանցման հետ կապված գործընթացը 1. Միջազգային բյուրոյից ստացված միջազգային գրանցման մասին ցանկացած ծանուցման նկատմամբ, որում նշված է Հայաստանի Հանրապետությունը, կիրառվում են սույն օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ առարկության ներկայացման և 47-րդ հոդվածի համաձայն՝ հայտի ըստ էության փորձաքննության անցկացման		

			գործընթացները, այն նույն պայմաններով, որոնք սույն օրենքով նախատեսված են անմիջականորեն պետական լիազոր մարմին ներկայացված հայտերի համար: 2. Միջազգային գրանցման դեմ, որում նշված է Հայաստանի Հանրապետությունը, առարկությունները կարող են ներկայացվել պետական լիազոր մարմին՝ տվյալ միջազգային գրանցման վերաբերյալ տեղեկությունները Միջազգային բյուրոյի կողմից պաշտոնական հրապարակման թվականից հետո՝ եռամսյա ժամկետում: Ներկայացված առարկությունները քննարկվում են սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով: 3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձաքննության արդյունքում պարզվում է, որ միջազգային գրանցումը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, կամ		

			եթե տվյալ միջազգային գրանցման դեմ առարկություն է ներկայացված, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարվել է, ապա պետական լիազոր մարմինը արդյունաբերական դիզայնին Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության տրամադրման մերժման կամ մասնակիորեն մերժման որոշում է կայացնում, որի մասին ծանուցում է Միջազգային բյուրոյին: 4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված մերժման կամ մասնակիորեն մերժման մասին որոշումից հետո սույն օրենքով նախատեսված ցանկացած գործընթաց պետական լիազոր մարմնի և արտոնագրատիրոջ միջև իրականացվում է վերջինիս ներկայացուցչի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: 5. Պետական լիազոր մարմինը կարող է իր կողմից ուղարկված		

			ցանկացած մերժումը ցանկացած ժամանակ մասնակիորեն կամ ամբողջությամբ հետ կանչել: 6. Պետական լիազոր մարմինը սահմանված կարգով Միջազգային բյուրոյին ծանուցում է միջազգային գրանցման վերաբերյալ բոլոր դատական ակտերի մասին:»		
65	ՀՀ կառավարություն	ԳԼՈՒԽ 16	Նախագծի «ԳԼՈՒԽ 11» բառը և թիվը փոխարինվել է «ԳԼՈՒԽ 16» բառով և թվով		
66	ՀՀ կառավարություն	Հոդված 71	Նախագծի 71-րդ հոդվածի 6-րդ մասի «օրենքի 22-29-րդ և 60-62-րդ հոդվածները» արտահայտությունը փոխարինվել է «օրենքը» բառով: Նույն հոդվածը լրացվել է 7-րդ մասով «Սույն օրենքի ընդունումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ, 8-րդ հոդվածի 1-ին, 37-րդ հոդվածի 6-րդ մասով, 47-րդ հոդվածի 1-ին մասով, 50-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, 56-րդ հոդվածի		

			4-րդ, 57-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերով, 59-րդ հոդվածի 3-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ մասով և 67-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգերը:»:		
67	ՀՀ կառավարություն	Հոդված 72	Նախագծի 72-րդ հոդվածի 1-ին մասի «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել է «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով: Հոդվածից հանվել է 2-րդ մասը:		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[2]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	

			համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	փոփոխություն:	
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	1) Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ներկայացվել է աղյուսակի տեսքով: 2) Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետի «ա)» և «Բ)» ենթակետերի համարները համապատասխանաբար փոխարինվել «ա.» եւ «բ.» համարներով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 2, Հոդված 3	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում «զիջման» տերմինը փոխարինվել է մասնագիտորեն ավելի ճշգրիտ «փոխանցման» տերմինով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

5.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «իզ)» ենթակետը և 3-րդ կետի «ժէ)» ենթակետը «փոփոխությունները բառից հետո »լրացվել են՝ «և լիցենզիայի չեղյալ հայտարարումը» արտահայտությամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «իբ)» ենթակետում «սահմանված ժամկետները երկարաձգելու մասին դիմումի քննարկման և դրա արդյունքում որոշում կայացնելու համար» արտահայտությունը փոխարինվել է «արդյունաբերական դիզայնի հայտում փոփոխություն կատարելու համար» արտահայտությամբ: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «իե)» ենթակետում «հայտի» բառից հետո ավելացվել է՝ «և	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			Եվրասիական հայտի» արտահայտությունը:		
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 4	1) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հանել: 2) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը դարձնել 1-ին կետ և դրա 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գյուտի արտոնագիր (կարճաժամկետ արտոնագիր) կամ արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու համար պետական տուրքը վճարվում է այդ մասին պետական լիազոր մարմնի որոշումն ուղարկելուց հետո օրենքով սահմանված ժամկետում, իսկ բույսերի սորտերի, ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			վկայագիր տալու, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման տալու համար պետական տուրքերը վճարվում են այդ մասին պետական լիազոր մարմնի որոշումը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում:» 3) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը դարձնել 2-րդ կետ:		
8.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Նախագծի 5-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682³-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետից հանվել են «տասներորդ բաժնում» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածից հանվել են «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 8	Նախագիծը լրացվել է նոր 8-րդ հոդվածով՝ «1. Օրենսգրքի 1153-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Արտոնագրի նկատմամբ իրավունքը փոխանցելու մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները գրանցվում են լիազոր մարմնում:»:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 8 Հոդված 9	1. Նախագծի 8-րդ հոդվածի համարակալումը փոխվել է՝ դարձել է «Հոդված 9.»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	

			2. Նախագծի 9-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	փոփոխություն:	
«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[4]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			Հանրապետության» բառերը:		
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[5]-06.07.2020-ՏՀ-011/1					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[6]-06.07.2020-ՏՀ-011/1)					

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը, «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառն փոխարինվել է «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող	Ընդունվել է: Կատարվել է	

			տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	համապատասխան փոփոխություն:	
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[7]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1. Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը: 2. 1-ին հոդվածի 1-ին մասում «ենթակետում» բառը փոխարինվել է «կետում» բառով:		
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը, իսկ «ենթակետում» բառը փոխարինվել է «կետում» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[8]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1-ին հոդվածի 1-ին մասում «ենթակետում» բառը փոխարինվել է «կետում» բառով: Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	

			տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	փոփոխություն:	
«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[9]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1)Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը, 2) Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բառերը» բառից առաջ լրացվել է «կետադրական նշանը եւ» ձեւակերպումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[10]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[11]-06.07.2020-ՏՀ-011/1)					

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը, «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը փոխարինվել է «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում օրենքի անվանումն համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ օրենք)» բառերը,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող	Ընդունվել է: Կատարվել է	

			տասներորդ օրը» բառերը փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով	համապատասխան փոփոխություն:	
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-682[12]-06.07.2020-ՏՀ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր Հոդված 1	Նախագծի վերնագրում և 1-ին հոդվածում «վերաբերյալ» բառից հետո լրացվել են «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «բառերից» բառն փոխարինվել է «թվերից» բառով, իսկ ««, 189.19-րդ» բառերով» ձեւակերպումը փոխարինվել է՝ ««, 189.25» կետադրական նշանով եւ թվով» ձեւակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3	ՀՀ կառավարություն	Հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	

			փոխարինվել են «2021 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	փոփոխություն:	
4	ՀՀ կառավարություն	Նախագծի ամբողջ տեքստում	Նախագծի ամբողջ տեքստում «189.19» թվերը փոխարինվել են «189.25» թվերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	